օրէն, եթէ Անիի նշանաւոր Բարսեղ եպիսկոպոսը չէ, որ յետոյ կաթողիկոսացաւ, որ կարող էր Կեչառիսի վերանորոգութեան և պայծառութեան հովանաւոր լինել իբրև իւր նախնեաց, Պահլաւունիների սեպհականութեան (*)։

Հայր Պետրոսի յաջորդն էր Հայր Խաչատուրյորի արձանագրութեան կցուած են երկու ուրիշներ ևս, որոնց տողերի սկիզբը նոյնպէս մնացած է ժամատան պատի տակ, ասել է, թէ գրուած են նրա շինութիւնից առաջ։ Առաջին արձանագրութիւնը գրուած է ոմն Սիմէոն քահանայի բերանից, որ, ինչ որ բան գնել է եկեղեցու համար և նրա համար նշանակել են տարին երկու ժամ։ Միւս արձանագրութիւնը, որի սկզբնաւո-

գարի ութսունական–իննսունական թուականներին, որին յաջորդում է Գրիգոր վարդապետ Մոնոնիկ, գուցէ և հայր Համազասպ, մէկը վարդապետութեան, միւսը կառավարութեան գլուխ, որ յամենայն դէպս պաշտօնավարում էր Գրիգորի ժամանակ։ Նորոգուած եկեղեցին կարող է միայն Լուսաւորիչը լինել, որի պատին և արձանագրուած է իրողութիւնը. Հայր Պետրոսը միաբանական կեանքն էր նորոգել, նորա յաջորդն արդէն զբաղուած է շինարարական նորոգութեամբ։ Հայր Խաչատուրի և Գիշուկի մասին աւելի տեղեկութիւն չունինք, քան ինչ որ գրուած է արձանագրութեան մէջ, բայց ամիր Բուրան, կարծում ենք, Հայր Օհաննա վանքի (*) 1211 թուի մի արձա-

Պատկեր 126.

րութիւնը կամ թուականը նոյնպէս ժամատան պատի տակն է մնացած, հետևեալն է

. . . Ես հայր Խաչատուր և միաբան եղբարքս վերստին նորոգեցաք զեկեղեցիս և սահմանեցաք տան սրբո խաչին, որ ամենայն եկեղեցիքս ժամ Գիշուկին առնեն միջնորդութբ. ամիր Բուրաին / . . . (պատի տակ) . . (Ց)ժԸիցն (Ցուել. Ա.. 39, պատկ. 125)։

Խաչատուրի վանահայրութիւնն ընկնում է ԺԲ.

նագրութեան մէջ յիշուած «մեծ սպարապետ Բուբայ»ն է, որ տեղական իշխանն է և «եա Առուինչք գյուղին Ոսկերակա, Առուքանակ, որ է առու Քանաքեռու. Բ. ակն ջաղացին»։ Նոյն Բուրան կամ Բուբակը պիտի լինի Աթաբէկ Իւանէի տան գործակալը, որ իւր դուստր Առփային կնութեան տուաւ Լիպարիտ Օրբէլեանին. վերջին անգամ յիշւում է Ամաղուի մի

(*) Ալիշան (Այր. 261-2), այս երկու արձանագրութեան Հայր Պետրոսին տարբեր անձն է համարում։

Բարսեղի մասին. Ալիշան, Շիրակ, 21, 27, 41, 85, 164։ Վարդան 170, 174։

(*) Այս վանքը գտնւում է Սևանայ լճի արևմտեան ափին, Նոր Բայազիտի և Ելենովկայ գիւղի մէջ. արձանագրութիւնը տես Ջալալեան. Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Տփխիս, 1842, Բ. 130։ Սմբատեան, Գեղարքունիք 435։ Կոստանեան, Վիմական Տարեգիր 51։ Արձանագրութիւնը կարօտ է վերստուգութեան։